



ԳՐԻԳՈՐ ԳՅՈՒԼՅԱՆ

(Հոգևոր ճամարանի դասախոս)

ՍՈՂՈՄՈՆԻՑ ԿՈՄԻՏԱՍ

Արդեն վաղուց կորցրել էր մորը, կորցրեց նաև հորը, և մի օր, որք ու անօգնական. կանգնեց Ամենայն Հայոց Հայրապետի առաջ: Իր երգով գերեց նրան և մնաց վաճառում:

Էջմիածնական խորհուրդը վերցրեց նրան իր թևերի վրա ու տարավ...

Վանքում, ուսումնառության անարհեստի, հավկեց նրա որբությունը: Ազգը որդեգրեց նրան:

Բայց, այնուամենայնիվ, նա մենակ էր. երբ լուր էր աղմուկը, և գիշերը թանձրանում խցիկի առանձնություն մեջ, նա թափվում էր: Երբեմն երազում տեսնում էր Թագուհուն՝ լույսերի մեջ թաթախված իր մորը. երկարում էր թևերը՝ գրկելու համար նրան, բայց երազը ցնդում էր, և թևերը փակվում էին իր իսկ կրծքի վրա: Փղձկում էր: Ո՞ւմ սիրել, ո՞ւմ սրտի մեջ դատարկել իր սիրտը. ո՞ւմ հետ բաժանել իր հոգու կարոտն ու աղապատանքը. ո՞ւմ թոցնել իր երազի թևերի վրա: Նա աշխարհում առանձին էր, ոչ ոք չուներ. ուստի սիրեց բոլորին: Ամբողջը դարձավ նրա ընտանիքը:

Ծնողներից որք՝ աշխարհին կապվ նրա սիրտը: Ու աշխարհը փոխվում, կաթիլ առ կաթիլ գալիս էր նրան, թափվում հոգու մեջ, աղմկում էր: Վանքը մի ուրույն աշխարհ էր, խոսցալ մի Հայաստան: Կալին պատանիներ՝ Վանից, Մուշից, Սասունից՝ հախտուն տենչերով, վեհ ձգտումներով, իրենց ազգային կոլորիտով, համով, հոտով:

Կալին և թուրքական ջարդերից ճողուպած ծերունիներ՝ արցունքակալած աչքերով՝ ուրույն մեջ վիշտն ու տառապանքը անդունդներ էին փորել: Այո, մի ուրույն մեծ աշխարհ էր վանքը, ուր գալիս խաչաձևվում էին ճամփաները և հարցանիշ կազմած՝ կախվում խորանում թախծող Աստվածատեր աչքերից:

Կուսիման ճահանջում, փոքրանում էր և անգալտանում հեռավորության մշուշի մեջ. երբ իր մենավոր պտույտների ժամանակ նա ժամերով կանգ էր առնում մեր կործանված տաճարների ավերակների առաջ՝ լսելու համար խոսող լույսությունները: Գիշերը, երբ բոլորը քնած էին լինում, նա դուրս էր գալիս իր խցիկից և ժամերով երթուղարձ առնում վանքի մեջ: Լուսնակ գիշերներով, երբ պայծառ էր լինում երկինքը, քառաթև, ծանրանիստ տաճարը իր սրածայր կաթողիկեններով կարծես պոկվում էր գետնից, զարնվում երկնքի դռան և խուլ դողդոցով նորից՝ սուզվում հայոց վշտի անհուն ծովի մեջ: Մեր պատմության երկու անխոս վկանները՝ վեհապան Մասիսն ու քառազագաթ Արագածը, դեմ-դիմաց կանգնած, իրենց սառցանիստ կատարների շողքն էին զգում վանքի քարերի վրա: Նա լուր էր նրանց համր գրույցը, հետևում ձայների, որոնք ինչ-որ մի տեղ լույսի կերտներ էին վառում: Երբ հավիում էր խոհերով ծանրաբեռն գիշերը, վաղ զարթնելով, նա կորչում էր մտակա այգիներից մեկում և, մի թմբի վրա



Կոմիտաս վարդապետ

կանգնած՝ դիտում էր ազգաբացը, երբ վաղորդյան մշուշը գետափից ու դաշտերից բարձրանալով ձուլվում էր կասրույա ծովի մեջ՝ մարգարիտներ շող տալով թփերի ու ծառերի վրա: Սրտիսում էին բարդիները, լույսը կացանաբերով վեր ու վեր էր հախճալում արաույտը, երգիկներից բարձրանում էր կասրույա ծովը: Իր լեռներից հեռանալով՝ սևահողն էր հերկում ջլապինդ հայ ման-

կալը: Բարին շատանում, թանձրանում էր նրա հորովելի մեջ: Գեղեցիկ էր Աստծու ստեղծած աշխարհը, երբ լույսը ծիածանվելով հանգչում էր ջրերի ու դաշտերի վրա, կախ էր ընկնում ծառերից, ասրտում էր, և լեռները վեղարավոր վարդապետների նման իրենց աղոթքն էին առաքում առ Աստված:

Տոնական օրերին բազմամասն էր լինում վանքը: Գալիս էին ուխտավորները՝ իրենց

ազգային տարազներով, իրենց երգ ու պարով, իրենց սովորություններով: Այնպիսով էր վաճառքը, և մարդկային առանձին կողակներ էին գոյանում: Համառ էր այս ժողովուրդը և անկյուն, անկոտրում՝ իր լեռների պես, բայց և դյուրաթեք՝ գետեզրին աճած եղեգնի պես: Երգում էր նույնիսկ վշտի մեջ, դուրս էր գետինը և երգի հորձանուտի մեջ խեղդում էր վիշտն էլ, տառապանքն էլ:

Երբ տաճարում հանդիսավոր պատարագ էր լինում, ինքն էր մենեքզում: Տաճարի պատերից իրեն էին նայում՝ Սահակն ու Մեսրոպը և մեր մյուս սրբերը: Վերանում էր հոգին, ծակում էր գմբեթը և խառնվելով աստղերին, մոլորվում էր անհունության մեջ՝ փնտրելու համար անհասելի Աստծուն:

Փոքր էր Կոստինան, բայց մեծ էր հալոց աշխարհը: Եվ ահա այս աշխարհը գալիս, թափվում էր իր հոգու մեջ, գետ էր դառնում, աղմկում: Իր մեջ կերպավորվում էր արվեստը, որ իրերից պոկվելով՝ ուզում էր հ'ընդառնալ: Երբեմն ձևը ծանրանալով՝ ընկնում էր նրան: Անձուկը խեղդում էր նրա կոկորդը, և նա ինքն իրենից փախչելով՝ ընկնում էր դաշտ՝ ընդ, վազում թիթեռնիկների ետևից, ծաղիկներ փնջում: Երբեմն խառնվում էր մարդկանց և, խոսք ու գրուցի մեջ, կատակաբանելով, ուզում էր իրենից հեռացնել Ջևը, որ գնալով ահագնանում էր՝ բնդգորկելու համար ողջ տիեզերքը: Երբեմն ինքն էր վազում Ջևի ետևից, հանձնվում էր նրան. և հոգին ողորկում էր անհուն ձայներով, որոնք երանգներ, նրբերանգներ ունեին: Երբ Ջևը իր արյան մեջ պտտաբող տեղի հետ միախառնվելով կլանում էր նրան, նա ասամանազատվում էր աշխարհից, մարդկանցից: Հեռավորություն պահելով՝ աշխարհից՝ նա նրան տեսնում էր իր ողջ բազմազանության մեջ: Իր անձի մեջ ձևավորվում էր արդեն իր Անձնավորությունը: Անորոշությունը թանձրանում էր. կորած ինչ-որ բան, դարերի փոշին քերելով, վերհայտնվում էր իր մեջ՝ կամրջելով հինը նորին, անսահմանը՝ սահմանավորին: Սողոմոնը սարսուռից տառապանքով, քերկրալից անհանգստու-

թյամբ ընտելանում էր Ջևին, որ անընդհատ աճում էր՝ գույներ, ձայներ անձրևելով որոնող մտքի տոթակեզ անդաստաններում: Սողոմոնը հախտուն վճռականությամբ մրտալ ալը Ջևի մեջ և այն դարձրեց իր ամենօրյա զգեստը: Ջևը առաջնորդեց նրան, տարավ մինչև Գերմանիա, ցույց տվեց այն, ինչ իրն էր և այն, ինչ իրը չէր: Ջևը փառաբեց, շոյեց նրան, և նա հանկարծ դարձավ իր ողջ տեսածի, զգացածի տիրակալը:

Եվ այսպես, որք Սողոմոնից ծնվեց հսկա Կոմիտասը:

*
* *

Կոմիտասը 20-րդ դարի սեմին արտահայտությունն է այն նույն ոգու, որ բաժնահավաք Գարեգին Սրվանձությանցին գրի առնել տվեց մեր ազգային դյուցազնավեպը, որ Թորոս Թորամանյանին հոգու աչքերով վերականգնել տվեց կործանված տաճարի աստվածային գեղեցկությունը, որ քաջերի քաջին՝ Անդրանիկին, սովորեցրեց իբրև արծիվ սալառնել և միշտ ու ամենուրեք հալթել թշնամուն:

20-րդ դարի սեմին Կոմիտասը իր կորցրածը վերագտած առաջին մեծ հայն է, որն իր օրինակով վարակեց ամբողջ հայությունը և իր երգերի հզոր հմայքով նրան երկրորդ անգամ հալ դարձրեց՝ ըստ նմանության յուրում: Աշխարհում տաղանդավոր, նույնիսկ հանճարեղ երաժիշտներ շատ կան, եղել են, կլինեն, սցենիչ Կոմիտասը մեզ համար եզակի է, անկրկնելի: Ինչ նա կատարեց, մարդ միայն մի անգամ կարող է կատարել կյանքում: Կոմիտասը գտավ, մեզ վերադարձրեց մեր այն զգացողությունը, որով մենք մեր հիմնական ձգտումներով նման լինելով հանդերձ բոլոր ժողովուրդներին, նրանցից անհունապես տարբերվում ենք մեր համ ու հոտով, մեր հոգու սեփական կնիքով: Կոմիտասը իր ազնվագույն պարզությունն ու բյուրեղային մաքրությունը վերագտած հալ ժողովրդի ոգին է, որ եղել է երեկ, կա այսօր, կլինի և վաղը:

